

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԿՈԳԵԿՈՉԷ ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԸ

Լիբանանահայութիւնը եւս հնարաւորութիւն ունեցաւ պատշաճ կերպով ոգեկոչելու հնչակեան քսան ամնահ ղեկավարներու նահատակութեան 110-րդ տարելիցը: Կազմակերպութեամբ Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեան Լիբանանի շրջանի Վարիչ մարմինին, երէկ երեկոյեան, Սիու-



ֆիի Saints Coeurs վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ ոգեկոչումի պաշտօնական հանդիսութիւն, ներկայութեամբ հոգեւոր հայրերու, ՍԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Համբիկ Սարաֆեանի, Լիբանանի շրջանի Վարիչ մարմինի ատենապետ ընկ. Վանիկ Տազետեանի ու անդամներու, կուսակցական պատասխանատուներու, մասնաճիւղերու եւ յարակից միութիւններու վարչութիւններու եւ անդամներու, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներու եւ լիբանանահայերու բազմութեան: Գլխաւոր բանախօս ընկ. Համբիկ Սարաֆեանի կողքին, Լիբանանի շրջանի Վարիչ մարմինի խօսքը արտասանեց ընկ. Տազետեան, մինչ երիտա-



սարդութեան խօսքը փոխանցեց Տիգրանի ուս. երիտ. միութեան ատենապետ ընկ. Սեւակ Իզմիրլեան: Տեղի ունեցաւ վաւերագրական տեսերիզի ցուցադրութիւն, իսկ ընկ. Յովիկ Թաֆրանեան եւ Սմբատ Խալաթեան մատուցեցին ազգային յեղափոխական երգեր:

Ոգեկոչումի հանդիսութեան ամբողջական թղթակցութիւնը՝ յաջորդիւ:

ԸՆԿ. ՍԱՐԱՖԵԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ ՅԱՐԱՆՈՒՄՆԱԿԱՆ ՊԵՏԵՐՈՒՆ

Քսաններու նահատակութեան 110-րդ տարելիցի ոգեկոչումին առթիւ Լիբանան գտնուող Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Համբիկ Սարաֆեան խորհրդակցութիւններ ունեցաւ նաեւ լիբանանահայ յարանուանական երեք պետերուն հետ: Երէկ, 27 Յունիսի առաւօտեան Պիքֆայայի վանքին մէջ տեսակցեցաւ Սեօի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին հետ, ընկերակցութեամբ վարչութեան անդամ ընկ. Ալեքսան Քեօշկերեանի եւ ՍԴՀԿ Լիբանանի շրջանի Վարիչ մարմինի ատենապետ ընկ. Վանիկ Տազետեանի ու փոխատենապետ ընկ. Մարտիկ Ժամկոչեանի: Յնչակեան կուսակցութեան պատուիրակութիւնը ապա այցելեց Ժաթաուի, ուր տեսակցեցաւ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Կաթողիկոս-պատրիարքին հետ: Իսկ երեկոյեան, ընկ. Համբիկ Սարաֆեանն ու ընկերակիցները Հայկազեան համալսարանին մէջ տեսակցեցաւ ՍԱՀԱՄ Նախագահ վեր. դոկտ. Փօլ Հայտոսեանի հետ: Հանդիպումները պատեհ առիթ էին քննարկելու հայութիւնը հետաքրքրող միւլթերը՝ ներառեալ լիբանանահայութեան դիմագրաւած մարտահրաւերները, ապահովական ու ընկերատնտեսական խնդիրները, զանոնք յաղթահարելու ուղղութեամբ ձեռնարկուած քայլերը, վերջին շրջանին լիբանանեան ու տարածաշրջանային պատերազմներուն լոյսին տակ Սիջին Արեւեքի մէջ պարզուած իրավիճակը, ինչպէս նաեւ համահայկական թղթածրարները եւ Հայաստանի նորագոյն մտահոգիչ զարգացումները: ՍԴՀԿ-ի պատուիրակութիւնը զնահատեց համայնքային եւ ընդհանրապէս ազգային կեանքին մէջ յարանուանական պետերուն եւ եկեղեցիներուն առանցքային դերակատարութիւնը՝ յարատեւ յաջողութիւն եւ անխափան երթ մաղթելով անոնց: Ժողովականները կարեւորեցին աշխրջութիւնը եւ շեշտեցին մանաւանդ այս անկայուն օրերուն մնայուն հաղորդակցութեան ու համագործակցութեան անհրաժեշտութիւնը՝ նուազագոյն ցնցումներով բոլորելու համար այս փուլը թէ՛ Հայաստանի, թէ՛ տարածաշրջանի հայաշատ երկիրներուն մէջ:

ՃԳՆԱԺԱՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՈՐԱԳԻՐ. ՄԻՔԱՅԵԼ ԱՐՔ. ԱԶԱՊԱՀԵԱՆ

Հայաստանի մէջ կը շարունակուի առնակատումը պետական ու եկեղեցական բարձրաստիճան անձնակազմներուն միջեւ, ընկերակցութեամբ լարուած յայտարարութիւններու, ժողովրդային ցոյցերու, խուզարկումներու եւ ձերբակալութիւններու: Բազմաթիւ արք. Գալստասեանի ձերբակալութենէն ետք, առնակատումին նորագոյն փուլը երէկ կեդրոնացաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը բուռն քննադատող՝ Շիրակի թեմի առաջնորդ Սիջայէլ արք. Աջապահեանին վրայ: Քրեական գործի մը հիման վրայ, ապահովական ուժերը երէկ կանուխ առաւօտեան այցելեցին Շիրակի թեմի առաջնորդարան, ուր խուզարկումներ կատարեցին, միւլթեր առգրաւեցին, սակայն չկրցան գտնել առաջնորդը: Քննչական կոմիտեն յայտնեց, թէ սրբազանին կեցութեան վայրին մէջ կը կատարուին քննչական անհրաժեշտ գործողութիւններ:



Իմանալով, որ ան էջմիածին է, Ազգային Անվտանգութեան Ծառայութեան եւ ոստիկանութեան ուժերու կեդրոնացում եղաւ այնտեղ եւս: Իսկոյն մայրավաճառ ուղղուեցան բազմաթիւ քաղաքացիներ՝ պաշտպանելու համար սրբազանը: Իսկ երբ ան փորձեց ներկայանալ ԱԱԾ-ին, քաղաքացիները դէմ դրին ապահովութեան ուժերուն, ԱԱԾ յայտարարեց, թէ «քրեական գործի նախաքննութեան ընթացքին որոշում կայացուած է ձերբակալել արքեպիսկոպոսը, ուստի անոր կոչ կ'ուղղուի չբաժնուելու, այլ ներկայանալու ԱԱԾ-ի խումբին»: Վեհարանէն դուրս եկաւ նաեւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը, զորանջեցին Երեւանի եւ այլ շրջաններու եկեղեցիներու զանգեր, իսկ մայրաքաղաքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին հաղորդագրութեամբ մը հաւատացեալներուն յորդորեց ուղղուիլ էջմիածին: Վեհափառ Հայրապետը նշեց, թէ, քննարկումները պիտի շարունակեն եւ որոշեն հետագայ գործողութիւնները: «Բոլորս ջանք պիտի թափենք, որ արդարութիւնը գործէ մեր եկեղեցւոյ, մեր հոգեւորականներուն, սրբազաններուն ու երկրին պարագային», ըսաւ ան, չբացառելով որ սրբազանէն ետք իրենք եւս յայտնուին դատական մարմիններուն առջեւ: Ի տես յառաջացած պայթիւնավտանգ դրութեան, ապահովական ուժերը որոշեցին հեռանալ այր աթոռէն: Իսկ երեկոյեան, հակառակ իր հետեւորդներու յորդորին, սրբազանը հոգեւորականներու եւ քաղաքացիներու ընկերակցութեամբ երթով ուղղուեցաւ Քննչական կոմիտէ: Այնտեղ, ապահովական ուժերուն եւ ցուցարարներուն միջեւ տեղի ունեցաւ հրմշտուք, որուն յաջորդեցին ձերբակալութիւնները: Ներքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, թէ խումբ մը անձեր ձերբակալուած են քրեական գործի ծիրին մէջ եւ փոխադրուած ոստիկանատուներ: Անոնք կ'ամբաստանուին մանաւանդ արդարադատութեան իրականացումը խոչընդոտելու մէջ:

ՀԵՏԱՊՆԴՈՒՄԻՆ ՊԱՏՏԱՆԸ

Փաստաբան Արա Զոհրապեան Կիւմրիի մէջ ընթերցեց Շիրակի թեմի առաջնորդը ձերբակալելու որոշումը եւ ընդգծեց, որ ան հիմնուած է 2024-ի 3 Փետրուարին տրուած հարցազրոյցի մը մէջ սրբազանին խօսքերուն վրայ, ուր նկատուած են իշխանութիւնը եւ երկրին սահմանադրական կարգը տապալելու կոչեր: Իսկ Ընդհանուր դատախազութիւնը յայտարարեց, թէ քրեական գործը յարուցուած է 17 Յունիսին իշխանութիւնը տապալելու, տարածքային ամբողջականութիւնը խախտելու, ինքնիշխանութենէն հրաժարելու եւ սահմանադրական կարգը բռնի տապալելու հրապարակային կոչերու լոյսին տակ:

ԱՐԱՍ Ա. ԼՈՒԾՈՒՄ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ

Ի տես հայաստանեան վտանգաւոր զարգացումներուն, Սեօի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս յայտնեց, թէ «Հայաստանի մէջ ստեղծուած բարդ իրավիճակի համգուցալուծումին առաջին քայլը հրապարակային մեղադրանքներու

Շարունակութիւնը տեսնել էջ 4

ՕՂԱԿԱՅԱՆԸ ԲՆԱԿԱՆՈՆ Կ'ԱՇԽԱՏԻ

Պէյրութի միջազգային օդակայանի նախագահ Իպրահիմ Ապու Ալայուի յայտնեց, որ օդակայանը բնականոն կ'աշխատի, անհիմն համարելով կարգ մը թռիչքներ չեղարկելու մասին տարածուած լուրերը: Նշենք, թէ անցնող քանի մը օրերուն վերսկսած է Պէյրութ ուղղուող միջազգային ուղեւորութիւններուն մեծամասնութիւնը՝ Իսրայէլ-Իրան տասնօրեայ պատերազմին հետեւանքով ժամանակաւոր առկախումէ ետք:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՀԱՐՈՒԱԾՆԵՐՈՒ ՆՈՐ ՇԱՐՔ

Քանի մը օրուայ համեմատական հանդարտութենէն ետք, իսրայէլեան օդուժը երէկ շարունակեց ռմբակոծումները եւ հարաւի մէջ թիրախաւորեց աւելի քան քսան դիրք, սպաննելով կին մը եւ վիրաւորելով 21 ուրիշներ, յայտարարեց Առողջապահութեան նախարարութիւնը:

ԱՌԻՆ ՈՒ ՍԱԼԱՄ ԿԸ ԴՏԱՊԱՐՏԵՆ

Հանրապետութեան նախագահ Ժոզէֆ Աուն Պապատայի պալատին մէջ ընդունեց վարչապետ Նաուաֆ Սալամը եւ բանակի հրամանատար գորավար Ռուտոֆ Հայքալը, որոնց հետ արծարծեց երկրին ապահովական իրավիճակը, շեշտելով երկրին անվտանգութիւնը պանապանելու ուղղութեամբ:



անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու կարեւորութիւնը: Նախագահը դատաւարտեց հարաւը թիրախաւորած իսրայէլեան ուսնձգութիւնը, զայն համարելով զինադադարի համաձայնութեան եւ Լիբանանի զերիշխանութեան հեթական խախտում: Աուն միջազգային ընտանիքէն պահանջեց անյապաղ միջամտել եւ վերջ տալ իսրայէլեան ուսնձգութիւններուն:

Իսկ վարչապետ Նաուաֆ Սալամ միջազգային օրէնքի եւ զինադադարի խիստ խախտում համարեց տեղի ունեցածը, որուն միջոցաւ վնաս կը հասցուի երկրին կայունութեան:

ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ 28 ՄԻԼԻՈՆ

Կառավարութիւնը երէկ գումարեց իր հերթական միստը, որուն աւարտին տեղեկատուութեան նախարար Փօլ Մարքոս յայտնեց, թէ որոշուած է 28 միլիոն լիւանի բարձրացնել նուազագոյն աշխատավարձը՝ յառաջիկայ ամիսէն սկսեալ: Նիստին ընթացքին վարչապետը շեշտած է կառավարութեան աշխատանքային ծրագրի գործադրութեան անհրաժեշտութիւնը, կարեւորելով լիբանանեան սահմանային բռնագրաւեալ բլուրներէն իսրայէլեան նահանջը, ինչպէս նաեւ պետական հաստատութիւնները երկրին մէջ զենքի գործածութեան մենաշնորհի համարելը: Սալամ շեշտած է, որ կառավարութիւնը պէտք է տիրապետէ պատերազմի եւ խաղաղութեան որոշումին:

ԴԵՌ ԿԸ ՇՆՉԷ ՀԱԼԷՊԸ (2)

ՄՐՃՈՒՄ ՄԸՆ ԷՐ, ԲԱՅՑ ՊԱՅՔԱՐ ԷՐ՝ ՅԱՐԱՏԵՒՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՆԱԶՈ ԵՐԷՆԵԱՆ

Ակումբին բակը, ներքնայարկի սրահէն նուազախումբի փորձի մեղեդիներուն ունկնդրութեամբ, տիպրունիական, Հ.Մ.Մ.-ական տողը ու աղջիկներու եւ դեկավար ընկերներու հետ սեղաններու շուրջ ընկեր Գօգոյին հիւրասիրած թէլը կամ սուրճը համտեսելով աշխոյժ գրոյցի մէջ էինք: Յամկարծ ակումբ մուտք գործեցին ճերմակ տարագներուն վրայ անգլերէնով ՀՈՄՆԵՆՍԵՆ արձանագրուած ֆութպոլիստներու ջոկատ մը:



- Ի՞նչ ըրիք,- հարցուցին:
= Փենակիներով յաղթեցինք, անցանք կիսաւարտական,- պատասխանեց խմբապետ ընկեր Կարօն:

(Շարունակութիւնը տեսնել էջ 4)

ԱԶՆԻ՛Ւ ԸԱՅՈՐԴԻ,
ՈՒՐԱԽ ԹԷ ՏԵՈՒՐ ԱՌԻԹՆԵՐՈՎ
ՔՈՒ ԸՆԶՈՒՆ ՆՊԱՍՏԸ ԲԵՐ «ԱՐԱՐԱՏ» - Ի ԲԱՐԳԱԻԱԾՄԱՆ

ՊԵՂԵԼՈՎ ԱՐԱՐԱՏ-ի 3ԻՆ ՀԱՄԱԳՐՈՒՆԵՐԸ - 35

(55 տարի առաջ՝ այսօր)

ԼԵՒՆ ՀԱՌՈՅԵԱՆ (Հալւա)

«ԱՐԱՐԱՏ», 15-20 Յունիս 1970

Ձախլէի մէջ բացումը կատարուեր է Հ.Մ.Ս.-ի նոր ակունքին...:

Այս լուրն է որ իմ ուշադրութիւնը կը գրաւէ թերթին այս շաբթուան թիւերուն մէջ, նկատի ունենալով որ Ձախլէն փոքրաթիւ հայութիւն մը ունի իր ծոցը ու մանուկի էջերուն քիչ անգամ արծագանգներ կը հասնին հոնկէ: Եւ սակայն, ահա-ւասիկ, քա՛յլ մըն ալ Ձախլէն առեր է՝ ամրացնելու համար իր մարզական, սկաւտական եւ մշակութային առօրեային յենարանները:

Խանդավառութիւն բուրող պատկերազարդ թղթակցութիւն մը տպուեր է այս մասին: Հոն կ'ըսուի, թէ այս առթիւ Պէյրութն ալ միութենական պատասխանատուներ փութացեր էին Ձախլէ: Օրը Կիրակի էր (31 Մայիս): Բացման արարողութեան ընթացքին յաջորդաբար ուղերձներ կարդացեր են ընկ. Տիգրան Սարաֆեան (ատենապետ Պէյրութի Հ.Մ.Ս.-ի), օրդ. Սիլվա Ճերէճեան (Ձախլէի ակունքին անունով), ընկ. Աբրահամ Աշըգեան (Ձախլէի Հ.Մ.Ս.-ի վարչականներէն), Գաբրիէ Մոլոյեան (արաբերէնով) եւ մտաւորական ընկ. Գեորգ Տարօնի (Պէյրութէն), որ յիշեցուցեր է թէ Հ.Մ.Ս.-ի Ձախլէի մասնաճիւղը կը գործէ 1927-էն ի վեր: Կիրարկուեր է գեղարուեստական յայտագիր մըն ալ, որուն իրենց մասնակցութիւնը բերեր են երգիչ Սահակ Խաչատուրեան եւ Նազարէ Լջապահեան:

Կարդալէ ետք այս լրատուութիւնը, հարց տուի ես ինծի, թէ արդեօք ի՞նչ եղաւ ճակատագիրը Հ.Մ.Ս.-ի Ձախլէի այս ակունքին: Կը գոյատեւէ՞ր անկիւ առ այսօր: Ու պատասխանը ստացայ Պէյրութէն իրազեկ աղբիւր մը: Ո՛չ, ակունքը շատո՛ւնց գոյութենէ դադրեր էր արդէն...: Է՛հ, ակունքին բացման օրը ուղերձով հանդէս եկողներէն մին մարգարեացե՛ր էր երբ կ'ըսէր. «**Դժուար է ակունք ունենալը, սակայն միեւնոյն ատեն աւելի դժուար ու աւելի նուիրական է զայն պահելը**»...:

Անցեալ շաբթուան նման դրական արծագանգները կը շարունակուին Նոր Մերունը մշակութային միութեան «Արտա-ւազդ» թատերախումբի բեմականացուած «**Քաջ Նազար**» փիւսիկ մասին (հեղ.՝ Դերենիկ Դեմիրճեան, բեմադրիչ Լուֆֆի Թապազեան): Յովսէփ Մ. Պ. Ճիռեան (գրականութեան տղթոր Սորպոյնէն) դիտելէ ետք բեմադրութիւնը, յօդուածի մը մէջ նկատել կու տայ որ անկիւ «մտաւորական հանդիսատեսը գոհացնելու սահմանուած թատերախաղ մըն է, որքան ալ գուարճալի ըլլայ»:

Թատերական ճակատի վրայ, միւս կողմէ, կը պարզուի հետաքրքրական երեւոյթ մըն ալ: Արդարեւ, «**Արտաւազդ**» հազիւ ւարտած «**Քաջ Նազար**»-ի ներկայացումները, այս անգամ Հ.Մ.Ս.-ի թատերասէրներու Արդի Հայ Թատրոնը ծանուցեր է, թէ պիտի բեմադրէ «**Կոյսը**» անունով փիւս մը, Սարգիս Գրիգորեանի բեմադրութեամբ (Թէաթր տը Պէյրութ, Այն Մրէյսէ, Յունիս 20-21): Կը նշանակէ, թէ այդ թուականներուն, միեւնոյն շրջանակին մէջ (Ե.Մ.Ս.Ս. Հ.Մ.Ս.) կը գործէին ԵԻԿՈՒ թատերախումբեր, երկու բեմադրիչներով...: Շռայլութի՞ւն, թէ՞ իսկապէս թատերական ոսկեդար...:

Ինքնուրոյն յօդուածներ քիչ են այս շաբաթ, ցանցառ: Անոնցմէ մին է Մինաս Գանգրունիի գրութիւնը, ուր յօդուածագիրը կը շարունակէ իր ընթերցողներուն ծանօթացնել «ազգային ու միջազգային երաժշտական գործիքներ» (վեր-նագիրն է): Հոս կը գտնենք **պոնյօն** (գոյգ թմբուկներ), **մենաանէյնը** (քշոցի տեսակ մը), **քիսթունը** (մխոցներ ունեցող փողային նուագարան) եւ **ռապալաը**: Այս վերջինը, արաբե-րէնով, իզական անուն է, սակայն Մ. Գանգրունիի բացատրութիւններէն կը պարզուի, թէ անկիւ միաժամանակ անունն է նախնական ջութակի մը, կաշեպատ ձկնածեւ տուփով էլ երկու լարով:

Երեւանի «**Հայրենիքի Չայն**» շաբաթաթերթէն արտա-տպուեր է հայրենի ռատիոյի արտասահմանեան հաղորդում-ներու աւագ խմբագիր Շահէ Տատուրեանի լիբանանեան տպարարութիւնները ամփոփող մէկ յօդուածը: Ան Յունուարին այցելեր էր Լիբանան, համդիպումներ ունեցեր էր զանգամ շրջանակներու հետ եւ շփումներ հաստատեր մշակութային գետնի վրայ:

Խորհրդային Հայաստանի նկատմամբ «**Արարատ**»-ի կեցուածքը, հիմէն ի վեր, յստակ էր: «**Արարատ**» միշտ հետա-մուտ էր դրական ու վարդազոյն տեսնելու խորհրդային վարչակարգը ու առիթ չէր փախցնէր ջատագովելու հոն երեւցող մծե ու փոքր ամէն յաջողութիւն, ամէն յառաջդի-մութիւն: Եւ ան կ'անկկալէր միաժամանակ, որ Ափիւռքի բոլոր շրջանակները նոյն անվերապահութիւնը ցուցաբերէին Հայաս-տանի հանդէպ: Ահա այս մեկնակէտն է, որ մղած է զինք Ա. Էջով տալու Լիբանանի զբօսաշրջութեան նախարար Խաչիկ Պապիկեանի (Հ.Յ.Դ.-ի մօտիկ անձնաւորութիւն) մէկ յայտա-րարութիւնը, ուր ան ըսեր է որ «**մեր վրայ մծե տպաւորութիւն ձգեց Հայաստանի յաջողութիւնը մշակոյթի եւ տնտեսութեան մարգերու մէջ**» (խորագիրն է): Պապիկեան այս խօսքերը արտասաներ է լիբանանեան կառավարական պատուիրակու-թեան մը ուղեկցութեամբ Հայաստան այցելելէ ետք: Նախարար Պապիկեան ըսեր է. «**Ամեն ծանօթացանք Հայաստանի նուա-ճումներուն, ականատես եղանք հայ ժողովուրդի բերկրալից աշխատանքի արդիւնքներուն, տեսանք միջնադարեան հայ-կական ճարտարապետութեան հիմնալի կոթողները: ... Խորհրդային Հայաստանի մէջ հիւրընկալուելու օրերուն հա-ճոյքով նկատեցինք, որ կատարուած աշխատանքի եւ ազգային համերաշխ կեանքի շնորհիւ հանրապետութիւնը հասած է շատ գնահատելի մակարդակի: Ուրախութիւն պատ-ճառեցին մշակութային մարզի վրայ Հայաստանի ձեռք բերած նուաճումները, երաժշտութեան մէջ, քանդակագործութեան, գեղանկարչութեան, թատերական արուեստի, ...նաեւ՝ արդի-նաբերութեան, կրթութեան, լուսաւորութեան ասպարէզներուն մէջ**»: Զգալի է, որ Պապիկեանի այս խօսքերուն մէջ թերքը կողմնակալից մը, համախոհ մը գտած է իր համոզումներուն:

Հայաստանի առնչուող կարեւոր լուր մըն է նախագահ Նազուշ Յարութիւնեանի եւ մարաքախտ Բադրամեանի այցը Մարսել: Այս մասին թղթակցութիւն մը յղած է Երուսղոմ Խ. Պապոյեան: Գաղութին կողմէ հայրենի հիւրերուն ի պատիւ տրուած ճաշկերոյթի մը ընթացքին զօր. Բադրամեան խանդա-վառիչ բաներ պատմեր է Հայաստանի մասին:

Եւ ահա՝ ուշագրաւ լուր մը եւս. «**Հայ մշակոյթի երեկոյ Ալճերիոյ մէջ**»...:

Միսալ չկարդացիր. **Ալճերիա**: Հոն հայ գաղութ չենք ունե-ցած, չունինք հիմա ալ: Ուրեմն, ո՞վ ինչպէ՞ս կազմակերպեր է հայկական երեկոյ մը այնտեղ...:

Խորհրդային Հայաստանի վայելած առաւելութիւններէն մին էր այս: Խորհրդային Միութեան ծիրին մէջ Հայաստան յաճախ կը յաջողէր իր տոնիկ մշակոյթին շողերը հասցնել մինչեւ հեռաւոր ափեր...: Այս անգամ հայ ծայնն ու բառը հասեր են Ափրիկէի հիւսիսը՝ Ալճերիա: Հայաստանէն արուես-տագէտներու խմբակ մը տասնօրեայ այցով գտնուեր է այնտեղ: Ձեռնարկը կայացեր է Ալճերիոյ մայրաքաղաքի Խորհրդային մշակութային կեդրոնին մէջ (Յունիս): Ներկայ հանրութեան Հայաստանի մասին պատմեր է «**Սովետական Արուեստ**» ամսագրի աշխատակցուի Սաթիկ Խաչիկեան: Լուսանկարներու ցուցահանդէսով մը պատկերացում մը տրուեր է հայ հանրապետութեան մասին: Յետոյ սարքուեր է համերգ՝ հայ յօրինողներու գործերով. ալճերիացի գրատե-րուին ծանօթացուեր են Թումանեանն ու Չարենցը:

Լուրի մը մէջ կը հաղորդուի, թէ Հ.Բ.Ը.Մ.-ի ընդհանուր տնօրէն Գրիգոր Կիրակոսեան հանգստեան պիտի կոչուի, տարիքի բերումով: Նոյն պաշտօնին մէջ զինք պիտի փոխարի-նէ եղեր երիտասարդ ու մտաւորական ուժ մը՝ Միսաք Հայկենց:

Ներքին գաղութային լուրերէն մին է «Ալումնայ գլապ»-ին մէջ սարքուած «Նորահաս սերունդի ցուցահանդէսը» (Յունիս 5-11), արուեստի այլազան գործերով: Թղթակցութիւնը ստո-րագրող Սամօ (Սարգիսեան) կը թուէ մասնակից հայորդի-ներուն անունները, սակայն շեշտը կը դնէ զինք տպաւորած չորս անուններու վրայ. **Ռուբէն Նաճարեան** (իւղանկարներ), **Զաւէն Ճապուրեան** (երգիծանկարներ), **Հերի Պետրոսեան** (արծանիկներ) եւ **Յակոբ Սարգիսեան** (մոզայիք): 55 տարի անց՝ հարցուն մը ինքզինք կը պարտադրէ. այս շնորհալի տղաքը հետագային ալ շարունակեցի՞ն արդեօք իրենց վերել-քը, նուաճումներ արծանագրեցի՞ն իրենց նախասիրած արուեստի բնագաւառներուն մէջ...:

Քսան կախաղաններու գլխաւոր դէմքը՝ Փարամազ, ոգե-կոչուեր է իր կիսանդրիին շուրջ (Հ.Մ.Ս.-ի Տան մուտքին), նահատակութեան 55-ամեակին առիթով (Յունիս 15): Ընկեր-ներ ու պատասխանատուներ ծաղիկներ դրեր են հոն: Խօսք առեր են Յովհաննէս Ճերէճեան եւ Հրանդ Գամգրունի:

Այլ լուր մըն է Մանուկներու միջազգային օրուան նշումը Սահակեան լիսէի մէջ (Յունիս 1): Հանդէսին բացումը կատա-րեր է բժշկուիի Հայկուիի Մահտեսեան: Գործադրուեր է երգէ, նուագէ եւ արտասանութիւններ բաղկացած յայտագիր մը: Բանախօսեր է օրդ. Գոհարիկ Տէր Պօղոսեան:

Շաբթուան «**Գրական էջ**»-ին մէջ լայն հատուած մը տրուեր է Յովսէփ Մ.Պ. Ճիռեանի «**Թարմերու խորշոմները**» անտիպ թատերգութենէն: Անկիւ ներշնչուած է եղեր Փարիզի Քարթիէ Լաբէի ուսանողական կեանքէն: Կը նշուի միաժամանակ, թէ Ճիռեան ունի հայերէնով ու ֆրանսերէնով գրուած այլ թատեր-գութիւններ ալ: Նոյն էջին վրայ Ազատուիի Սիմոնեան գրա-խօսեր է հայրենի ծանօթ արծակագիր Վարդգէս Պետրոսեանի «**Հայկական էսքիզներ**» երկը, խօսելով անկէ ստացած իր խորունկ տպաւորութեանց մասին:

Ազգային ծանուցումներու զրեթէ չհանդիպեցայ այս շաբաթ: Բայց կար պակարդութեան երկու լուր. պասկուեր ու ընտա-նիք կազմեր են Թոնի Կիւրլէքեան եւ օրդ. Սեւան Ատուրեան (Պէյրութ), Սարգիս Քիւփէլեան եւ օրդ. Մանուշակ Տալտալեան (Պէյրութ):

Կը հաւատամ, որ հայ ընտանեկան նորակազմ բոյներու հաստատումը, որպէս հայապահպանման ազդակ, հիմքն է մեր հաւաքական գոյատեւումին...:

ՓԻԼՍՈՓԱՅԵԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ-26

ՃԱԿԱՏԱԳՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԵՆ ՇԵՐԻՔ

Ճակատագրականութիւնը որոշ անձերու այն տրամադրու-թիւնն է, որու համաձայն աշխարհի մէջ, ինչպէս նաեւ իրենց կեանքին մէջ ինչ որ պիտի պատահի արդէն գրուած է (ուրկէ ճակատագիր բառը) եւ նախասահմանուած, նախատնօ-րինուած, այնպէս որ երբ պիտի գիտնանք, մեր ջանքերը նախասահմանաւորութիւնը պիտի չկարենան կանխել կամ արգիլել, ընդհակառակը զայն պիտի իրականացնեն: Այս գաղափարախօսութիւնը յաճախ ներկայացուած է աստուա-ծաբանական ձեւով. ապագան կարելի չէ ծածկել յստակատես Աստուծոյ առջէն: Ե՛րբ, որ այս գեղեցիկ եզրակացութիւնը Աստուծոյ հզօրութիւնը կ'ապացուցանէ: Իրականութեան մէջ այս մէկը ինքնախաբէութիւն է՝ բառախաղի ձեւով դրսե-ւորուած:

Նախասահմանաւորութեան վարդապետութիւնը յաճախ սխալ մեկնաբանուած է: Որովհետեւ այս վարդապետութեան հետեւորդները ճակատագրականութիւնը չեն հասկնար, որպէս Աստուծոյ իրենց լարած այն ծուղակը, որուն հետեւանքով ենթական, որ կը ջանայ ըլլալ արդար, ինչ կ'ուզէ ըլլալ արտա-քին առիթները, շնորհները, նոյնիսկ հրաշքները, դատա-պարտուած է կրելու այն ինչ որ տնօրինուած է նախօրօք: Այսուհանդերձ ճակատագրի ենթադրեալ խառնուածքին խոր-հուրդը վերացական կուռք մըն է: Որովհետեւ բարեբախ-տաբար մարդ արարածը նուազ կախեալ է իր սեփական խորքէն եւ աւելի ենթակալ է իր արարքներուն : Ձոր օրինակ մէկը որ խորքին մէջ խաբէբայ է, պիտի վարուի հետեւելով իր խառնածքին, երբեմն նոյնիսկ խաբելով պետութիւնը, սակայն բանաստեղծ մը, որ մարդոց կողմէ փառաբանուած է յաճախ, նոյն անձն է դատաւորին դիմաց: Այս խիստ վարդապետութիւնը բազմաթիւ ապացոյցներ կը գտնէ մեղքերու, զղոյմներու, նոյնիսկ քաւութեան դիտարկումի պարագային: Երեխան, նոյնիսկ չափափաս անհատը իրենց կատարած սխալներուն նկատմամբ ճակատագիր մը կարողաւ տրամադրուած չեն: Երբ դատական հեղինակութիւնը իր վճիռ կ'արձակէ՝ իրենց իրենցմէ կը յուսահատին եւ կը վարուին այնպէս զայրոյթով, թէ

ՄԴԿ ԴՈՒՐՍ ԿՈՒ ԳԱՅ
ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
ԽՈՐՀՈՒՐԴԷՆ (CCAF)



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Ֆրանսայի Վարիչ մարմինը պաշտօնական յայտարարութեամբ մը կը տեղեկացնէ, որ քաշուած է Ֆրանսայի Հայկական միութիւն-ներն ու կազմակերպութիւնները համակարգող խորհուրդէն՝ CCAF-էն:

Կուսակցութեան յայտարարութեան մէջ մասնաւորապէս ըսուած է.

« Նախ եւ առաջ կը նկատենք հաւասար ներկայացուցչու-թեան բացակայութիւն մեհատներու եւ անհատական մա-խաճեռութիւններու՝ շրջանային մակարդակի վրայ, հոն ուր միութենական աշխատանքը ամենաարդիւնատէն է:

Երկրորդ, կը դատապարտենք պաշտօնի անսահմանափակ կուտակման անփոփոխութիւնը, որ թոյլ կու տայ քանի մը պա-տասխանատուի անվերջօրէն կառչած մնալ որոշումներ կա-յացնողի դիրքերուն: Իշխանութեան նման առեւանգում կը հակաւէ վերամորոգման հիմնական պահանջին եւ կ ամ-րապնդէ դիրքը ղեկավարութեան մը, որ կը հակազդէ դոյզն փո-փոխութեան փորձի, խափանելով վերամորոգման որբէւ հեռանկար, որ անհրաժեշտ է առողջ կազմակերպութեան մը համար:

Բացի ատկէ, CCAF կը յաւակնի այնպիսի ներկայացուցչու-թեան մը, որ դուրս կը մնայ իր իրական սահմաններէն: Ան իրա-ւասութիւնն ունի արտայայտուելու միայն իր անդամներուն անունով եւ սահմանափակ տարածքի մը մէջ: Յաւակնիլ ամ-բողջ հայկական գաղութին ներկայացուցչութեան՝ կը նշանակէ ինքն իրեն թոյլ տալ այնպիսի օրինականութիւն մը, որ գաղութը չէ պարզեւած իրեն:

Եւ վերջապէս, մեզի համար անընդունելի է, որ նման կառոյ-ցի անդամ մը իրաւագրկուի պաշտպանուելու հիմնական կա-րելիութենէն, երբ ենթաշուած է անհամաձայնութեան մը մէջ: Մերժել լսել կողմ մը կը նշանակէ անարգել արդարութիւնը եւ ոտնակոխել թափանցկութեան սկզբունքը:

Նկատի առնելով այս խտրորումները, մեզի համար բարոյա-պէս անհնար է կապակցուիլ նոյնանման համակարգի մը հետ, որուն կանոնները կը հակասեն մեր արժեքներուն: Այսու, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը կը բաժնուի CCAF-էն»:

ամէն ոք հաւատացած է տրուած վճիռին, որ իրենք այս վերջինին արժանի էին:

Գուշակի մը կամ վիուկի մը կատարած գուշակութիւնները երբեմն կ'իրականանան կամ հանդիպումով կամ որոշ նախա-նշաններու կանխազգաց ծանօթութեան շնորհիւ: Շատ անգամ կը մոռցուին նման գուշակութիւններու ծախողութիւնները եւ ընդհանրապէս կը խօսուի դրական նախատեսումներու շուրջ: Սակայն մարգարէներու նկատմամբ ցուցաբերուած հաւատքը աւելի խոր եւ թաքնուած արմատներ ունի:

Խուսափելի արկածի մը իրականացումը աւելի կը շեշտուի երբ մանուանդ կ'ունենանք հաւատալու, որ անհմար էր խուսափիլ անկէ: Երբ մօտաւոր անձի մը ատելութենէն կամ շան մը հաւանական յարձակումէն կը վախճանք, մեր այս ուղղութեամբ ունեցած գաղափարն է, որ երբեմն իրակա-նութիւն կը դարձնէ այն, որ արդէն կը սպասէինք: Հոս ճակա-տագիրը որբէւ դեր կամ իմաստ չունի: Եթէ աւետուած ապագան միայն ինձմէ է որ կախում ունի, ես շուտով պիտի յաջողիմ գտնել նշանները իմ մէջս, խուսափելու համար մօտա-լուտ արկածէ մը, կամ ոճրագործութենէ, ծախող կամ յիմար արարքէ մը, որոնք մեկնակէտ ունին մտացածին ենթադ-րութիւն:

Իրականութեան մէջ ամէն անհատ իր ուրոյն մարգարէն է: Որովհետեւ մեր բնազդական արարքները, վերեւ յիշուած սկզբունքներուն համաձայն, ինքնեկ են եւ անմիջական: Հետե-ւաբար, քանի որ բնազդը մարդուն հիմնական ձգտումն է որբէւ արտաքին երեւոյթի դիմաց, յաճախ ճակատագրապաշտական հակումը կը սխալեցնէ ենթական, զայն ընդունելով որպէս սպասուած երեւոյթ: Բանականութիւնն է որ պիտի յստակացնէ երեւոյթին իսկական բնոյթը:

«ՄԱՐԱ» - ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

ՓԱՇՏՆԵԱՆԻ ԹՈՒՐԲԻԱ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՈՒ ԱՆԿԷ ԱՆԴԻՆ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան թուրքիոյ նախագահ Ռեժեպ Էրտողանի հրաւերով այցելեց Իսթանպուլ, ուր, ըստ պաշտօնական հաղորդագրութիւններուն, քննարկուած են տարածաշրջանային խաղաղութեան հետ առնչուող հարցեր: Անցեալին եւս Հայաստանի ղեկավարներ այցելած են Թուրքիա, սակայն անոնք եղած են յատուկ միջոցառումներու հետ կապուած առիթներով:

Նախ այցելութեան արտաքին երեւոյթին մասին, որ կրնայ մեծ կարեւորութիւն չունենալ, սակայն հայ-թուրք յարաբերութիւններու պատմական շրջանակին մէջ կրնայ դիտուիլ որպէս ժեսթ Թուրքիոյ կողմէ՝ ուղղուած Հայաստանին: Վարչապետը օդակայանին մէջ ու այլուր արժանացաւ բարձր մակարդակի ընդունելութեան, իսկ երկու ղեկավարներու հանդիպումը կայացաւ «Տղմապահչա» պալատին ներս, որ ժամանակին կառուցուած է հայ ճարտարապետներու կողմէ:

Չալով հանդիպումի քաղաքական մասին, նկատելի էր, որ միատեղ յայտարարութիւն չհրապարակուեցաւ եւ ոչ ալ տեղի ունեցաւ մամուլի ասուլիս: Այս կրնայ թարգմանուիլ, որ երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող հարցերու շուրջ ընդհանուր եզրեր չկան տակաւին: Այս իմաստով հարց կը յառաջանայ, թէ ինչո՞ւ Էրտողան մնաւ հրաւեր յղած էր Հայաստանի վարչապետին, երբ ինք տակաւին պատրաստ չէ դուրս գալու Ատրպէյճանի ազդեցութեան տակէն ու վարելու Հայաստանի նկատմամբ իր ուրոյն քաղաքականութիւնը: Էրտողան նոյնիսկ ստիպուած եղաւ, օր մը առաջ հրաւիրելու նաեւ Ատրպէյճանի նախագահը ու վստահեցնելու անոր, որ անակրկալներ պիտի չպատահին Փաշինեանի հետ հանդիպումին ընթացքին:

Թեւ Թուրքիա այցելութեան հրաւերը եղած էր Իսրայելի կողմէ Իրանի դէմ սկսած պատերազմէն առաջ, սակայն Հայաստանի համար կարեւոր էր այս այցելութիւնը, երկիրը ապահովագրելու համար տարբեր վտանգներէ, որոնք կրնան յառաջ գալ Իրան-Իսրայել երկարատեւ պատերազմի մը պարագային: Երեւանի որդեգրած քաղաքականութիւնը, որ կը ծգտի բոլորին հետ երկխօսութեամբ լուծելու առկայ խնդիրները ու հասնելու տարածաշրջանային խաղաղութեան, ամենէն տրամաբանական մօտեցումը կը թուի ըլլալ, այն պարագային երբ Հայաս-

տան չունի իր ապահովութիւնը երաշխաւորող որեւէ դաշնակից: Այն պահէն սկսեալ երբ Ռուսաստան հրաժարեցաւ իր ստանձնած դաշնակցային պարտաւորութիւններէն, Երեւանի առջեւ չմնաց այլ ելք, բացի իր հարեւան երկիրներուն հետ յարաբերութիւնները կարգաւորելէ:



Այսօր աշխարհը մեծ փոփոխութիւններու եզրին է եւ ոմանք նոյնիսկ կը խօսին համաշխարհային երրորդ պատերազմի մը մասին: Այս պայմաններուն տակ, քաղաքական անփութութիւն պիտի ըլլայ, եթէ բոլոր միջոցները չօգտագործուին՝ երկիրը հեռու պահելու նոր պատերազմէ:

Հանդիպումին վրայ եկաւ ստուեր ծգելու յաջորդ օրն իսկ կայացած Իսլամական Համագործակցութեան Կազմակերպութեան նախարարական համաժողովին կողմէ ընդունուած «Իսթանպուլի հռչակագիրը»: Հոն Ատրպէյճան կարողացած էր մտցնել իր ամեն տեսակի հակահայ թէգերն ու յերիւրանքները, այդպիսով «սալոթաժի» ենթարկելով Հայաստան-Թուրքիա երկխօսութեան այս փորձը եւս: Այս առնչութեամբ Հայաստանի Արտաքին գործերու նախարարութիւնը ստիպուած եղաւ յայտարարելու, որ Ատրպէյճանի նախաձեռնութեամբ ներկա-

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ (ԱՄՆ)

յացուած բանաձեւերուն մէջ տեղ գտած խեղաթիւրուած եւ ծայրայեղ միակողմանի ձեւակերպումները եւ հոն արտայայտուած շեշտադրումները կը հակասեն տարածաշրջանին մէջ տեւական խաղաղութեան հաստատման շահերուն եւ տրամաբանութեան:

Վերջաւորութեան կ'արժէ անդրադառնալ նաեւ մէկ այլ երեւոյթի՝ կապուած այս այցելութեան հետ: Ինչպէս սովոր է, Փաշինեան արտասահման իր այցելութիւններուն ընթացքին կը հանդիպի տեղւոյն հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ: Պոլսահայ կրօնական ու ազգային մարմիններուն հետ հանդիպումի ընթացքին Հայաստանի վարչապետը արժանացաւ ջերմ ընդունելութեան ու պատասխանեց անոնց հարցումներուն: Ուշագրաւ էր, որ Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը ոչ մէկ ներկայութիւն ապահոված էր այդ հանդիպումին: Այս բացակայութիւնը արժանացաւ բոլորի զարմանքին ու վրդովմունքին ու նկատուեցաւ ամեն բանէ առաջ վիրաւորանք՝ պոլսահայ համայնքին ու պոլսահայութեան ամենուրեք:

ԽԱՉԲԱՌ 42

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ

- Պատրուակ, շինծու պատճառ
- Անփորձ, սկսնակ
- Ածականակերտ մասնիկ - Պատարագի բաժակ - Իրերայաջորդ գիրեր
- Շրջ. գեղմ - Փոքրացնող մասնիկ - Ձեռքի մաս
- Անյաղթ փիլիսոփայ - Շրջ. ուղտափուշ
- Ծանրութեան միաւոր - Գարեգին Կոզիկեանի ծննդավայրը
- Անձայր՝ սիրէ, ախորժի - Ձայնանիշ - Գիրուց
- Ո՞ւր - Շրջ. մեքենայի կլոր ծող - Կէս՝ համառօտ
- Սատանայ
- Համաչափ

ՈՒՂԱՎԱՅԵԱՑ

- Ուիլիլմ Սարոյեանի երկերէն «... Կատակերգութիւն»
- Ուրացում (հակ.)
- Սարսափ - Գիւղաքաղաք - Կիսուած՝ փորելու գործիք
- Յանձնես - Ստացական ածական - Հեթանոսական կրօնք (հակ.)
- Կամիթ - Իգական օտար անուն
- Արական անուն - Յաղթողին տրուող զարդ
- Ճամբայ - Այրութենէն - Ծեծ, հարուած
- Աղբիւր - Կատաղի, անսամձ - Անվերջ բազմութիւն
- Ձերմիկ, մտերմիկ
- Ատենադպիր

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ 43

Կ	Ի	Լ	Ե	Կ	Ն	Խ	Ա	Յ	Ա	Տ	Ո	Ի	Կ	Ս	Խ	Ն	Յ	Ա	Ձ
Կ	Ա	Յ	Ա	Ր	Մ	Ա	Ր	Ն	Ա	Խ	Ա	Ն	Ձ	Ի	Ր	Ա	Ձ	Յ	Ձ
Ո	Ը	Տ	Հ	Ա	Ս	Տ	Ա	Տ	Ը	Ա	Ի	Ե	Ա	Պ	Ա	Ս	Տ	Ա	Ն
Փ	Հ	Ն	Ա	Ի	Ն	Ա	Տ	Ն	Ը	Ն	Ռ	Ն	Կ	Ս	Ն	Թ	Կ	Պ	
Ա	Ն	Ի	Թ	Պ	Ա	Կ	Թ	Ո	Ի	Ն	Դ	Ն	Տ	Ա	Ա	Ա	Ե	Ր	Ե
Գ	Ա	Ն	Ը	Ա	Ն	Ա	Տ	Ա	Տ	Ս	Ա	Հ	Ա	Յ	Տ	Ս	Թ	Ե	Ճ
Ձ	Ր	Ե	Ն	Հ	Յ	Ի	Խ	Ո	Ն	Ա	Ր	Հ	Ա	Կ	Ա	Ե	Ե	Ն	Պ
Ա	Ի	Կ	Կ	Ք	Ա	Ա	Ի	Թ	Ե	Ր	Ե	Ի	Ս	Տ	Ա	Յ	Ի	Ի	Ա
Ն	Չ	Ն	Ե	Ռ	Ի	Շ	Ի	Ո	Տ	Ա	Հ	Ո	Ի	Ն	Խ	Ն	Ը	Ն	Հ
Ձ	Շ	Խ	Ր	Ե	Ո	Ն	Տ	Ա	Ս	Պ	Ե	Տ	Ե	Կ	Ա	Ա	Ն	Ե	Յ
Ի	Ն	Ա	Ն	Ձ	Ր	Ե	Ի	Ա	Ր	Ն	Թ	Ր	Տ	Ա	Ղ	Կ	Տ	Տ	Ա
Ր	Ի	Ի	Ն	Ա	Ր	Տ	Ն	Ը	Ր	Տ	Կ	Ա	Ն	Ճ	Ա	Ա	Ա	Ս	Կ
Կ	Ո	Ն	Պ	Ա	Կ	Ա	Տ	Ս	Յ	Ա	Կ	Ա	Տ	Ի	Յ	Ի	Ն	Խ	Ի
Ա	Հ	Ա	Ա	Կ	Բ	Ա	Ն	Ա	Յ	Ա	Ր	Ի	Ր	Ե	Ք	Ո	Ի	Թ	Ն
Ն	Ն	Կ	Ս	Ա	Կ	Ա	Տ	Ա	Շ	Ա	Ի	Ո	Թ	Թ	Ր	Թ	Ք	Ի	Թ
Ի	Ա	Ա	Տ	Ս	Ձ	Ա	Ն	Ե	Ր	Ի	Ր	Ա	Յ	Ն	Ա	Ա	Ճ	Ի	Կ
Ո	Տ	Է	Կ	Ա	Կ	Ա	Տ	Ա	Պ	Ն	Հ	Պ	Ա	Ր	Տ	Ո	Բ	Ր	Ա
Դ	Ս	Թ	Ր	Հ	Լ	Ձ	Ի	Ի	Ն	Ս	Ո	Ն	Ա	Ր	Դ	Ո	Ս	Ե	Բ
Ն	Ի	Ա	Ի	Ի	Ք	Ն	Ա	Խ	Ա	Ճ	Ա	Յ	Լ	Ն	Ի	Ո	Լ	Հ	Մ
Ը	Խ	Ձ	Ո	Ի	Ի	Կ	Թ	Ի	Կ	Ն	Կ	Ձ	Ը	Ղ	Ձ	Ա	Ն	Ք	Խ

ՁԱՆՁԻ
ՉԳՓՈԿ
ՉԵՈՆՏՈՒ
ՉԵՈՔ
ՉԻԻՆ
ՉԿՆԿԻԹ
ՉՈՒԻԿ

ՅԱԿԻՆԹ
ՅԱԸԱԽԱՆՔ
ՅԱՅՏՆԻ
ՅԱՍՊԻՍ
ՅԱՏԱԿ
ՅԱՏՈՒԿ
ՅԱՐԻՐ
ՅԱՐՄԱՐ
ՅԵՍԱՆ
ՅՍԱԿ

ՆԱԽԱՆՁ
ՆԱՐԴՈՍ
ՆԵՐԿԱՅ
ՆԵՐԿԱՅԱՆԱԼԻ
ՆԿԱՐ
ՆՇԱՆԱԲԱՆ
ՆՇԱԲԱԿ
ՆՊԱՍՏ
ՆՊԱՏԱԿ
ՆՊԱՏԱԿԱԿԵՏ

ԱԿԱՏ
ԱՆԸՆԴՀԱՏ
ԱՆՀՈՒՆ
ԱՆՁՐԵԻ
ԱՆՅԱՐԻՐ
ԱՆՑԱԲՈՐ
ԱՊԱՍՏԱՆ
ԱՌՆԱԿԱՆ
ԱՄՊԵՏ
ԱՄՊԵՏԱԿԱՆ

ԸԴՁԱՆՔ
ԸՆԴՈՒԾԻՆ

ԸՆԴՈՒՆԱԿ
ԸՆԹԱՑԱԲՈՐՏ
ԸՆԿԵՐ
ԸՆՏԱՆԻ
ԸՆՏԱՆԻՔ
ԸՆՏՐԱՆԻ

ԹԱՏԵՐԱԲԵՄ
ԹԵԹԵԻ
ԹԵՐԵԻՍ
ԹԵԻՃԱԿ
ԹԵԱԿԱՆ
ԹԹՈՒԱՇ

ԹԻՐԻ
ԹՈՒԿԱՆ
ԹՈՒՆԴ

ԽԱՂԱՑՔ
ԽԱՐԱՁԱՆ
ԽԻՍՏ
ԽՍԲԱԿ
ԽՆԿԵԼԻ
ԽՆԿԵՆԻ
ԽՈՆԱՐՀ
ԽՍՏԵՆԻ
ԽՐԱՄԱՏ

ՀԱՇՏԱՐԱՐ
ՀԱՊԵՊ
ՀԱՍԱԿ
ՀԱՍՏԱՏ (2)
ՀԱՏՈՒ
ՀԼՈՒ
ՀՆԱՐԻՉ
ՀՈԼՆ
ՀՊԱՐՏ

ՁԱՅՆ
ՁԱՆՁԻՐ
ՁԱՐԻ

ԽԱՂԻՆ ՕՐԵՆՔԸ.

- Բառերը կրնան կարդացուիլ տարբեր ուղղութեամբ՝ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի:
- Միեւնոյն տառը կրնայ գործածուիլ մէկէ աւելի բառերու մէջ:
- Դիւրութեան համար սկսիլ երկար բառերը գտնելով:

Պահուած բառը (7 տառով)՝ ՋՐԱՅԻՆ ԹՈՉՈՒՆ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ ԹԻՒ 42-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՆՈՆԱԿ

Պահուած բառին եւ խաչբառին պատասխանները տեսնել խաղերու յաջորդ թիւով

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 41-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1		Դ	Ա	Ս	Տ	Ի	Ա	Ր	Ա	Կ
2	Բ		Ս	Պ	Ա	Ր	Տ	Ա		Ա
3	Ն	Օ		Ի	Ր	Յ	Ա		Կ	Ն
4	Ա	Ր	Մ		Ա	Ա		Կ	Ա	Խ
5	Կ	Ա	Ն	Ե	Փ		Գ	Ա	Ղ	Ա
6	Ե	Գ	Ի	Ս		Կ	Ի	Ր	Ո	Վ
7	Ց	Ի	Կ		Ս	Ա		Ի	Ճ	Ճ
8	Ո	Ր		Մ	Ա	Ր	Ի		Խ	Ա
9	Ի		Մ	Ա	Ն	Ա	Ս	Է		Ր
10	Մ	Ո	Խ	Ր	Ա	Պ	Ա	Շ	Տ	

ԴԵՌ ԿԸ ՇՆՉԷ ՀԱԼԷՊԸ (2)

Շարունակում էք 1-ին

Կարելի՞ բան էր ֆութպոլային հաղորդում մը ստանա՞մ ու հանգիստ մնա՞մ: Ընկեր Կարօ Մաթոսեանէն իմացայ յաջորդ մրցումին թուականն ու վայրը: Երեքշաբթի, 17 Յունիսին, ընկեր Յովսէփ Այվազեանի առաջնորդութեամբ ուղղուեցանք Ազիզիէի շրջան «Ժալա» միսի ֆութպոլի դաշտը: «Քրիստոնեական ընտանիքներ»ու կազմակերպած «Խաղաղութեան 10-րդ մրցաշարք»ի ծիրին մէջ ընդգրկուած էին 20 խումբեր: Դ.Մ.Մ.-ի միսի ֆութպոլի խումբը կիսաւարտական հանգրուան հասած էր նախորդ մրցումները յաղթելով. «Մութապիմ Եարանի»ի դէմ 7-4 եւ «Աէն Թէրէզ»ին 3-3 (փենալթի հարուածներով 3-1): Այդ օր, «ոտքս խերով չեկա» մեր տղոց համար: Կիսախաղը 2-4 հաշուով ետ մնալէ ետք, Դալէպի Դ.Մ.Մ.-ի տղաքը երկրորդ կիսախաղին յաջողեցան ոչ միայն հաւասարեցնել հաշիւը, այլ մրցումի աւարտէն 5 վայրկեան մնացած մէկ կօլի առաւելութիւն մըն ալ արձանագրած էին: Սակայն ֆութպոլային չգրուած եւ անբացատրելի օրէնքը,ոմանց համար բախտը, երես թեքած էր ԴոՄԵՆՍԵՆի տղոցմէ: Մրցումը աւարտեցաւ 5-6 արդիւնքով:



Տղաքը խիստ նեղուած էին: Սակայն ես այլ բան կը մտածէի: Նախ ուրախ էի, որ օր ըստ օրէ ապաքինուող Դալէպի մէջ ներկայ գտնուեցայ ֆութպոլի մրցումի մը, թրիպիւմէն բազմաթիւ Դ.Մ.Մ.-ականներու հետ բարձրաձայն «Եալլա Դ.Մ.Մ. եալլա» աղաղակելու առիթը ունեցայ, ծափահարեցի, տազնապեցայ եւ այլն: Մարզադաշտին չորս կողմը լեփ-լեցուն ներկաներ կային: Բոլորն ալ յարգալից ու մարզավայել կը հետեւէին մրցումին: Ոչ մէկ անպատշաճ երեւոյթ մըցակիցներուն հանդէպ: Մէկ խօսքով զգացի, որ գաղութը կը փորձէ ինքզինք վերագտնել, Դալէպը սկսած է շնչել:

Խաղասկզբին առիթ տրուեցաւ նկարուելու եւ ծեռք սեղմելու խումբի պատասխանատու՝ ընկեր Գեորգ Փոնթիկեանի, մարզիչ՝ ընկեր Վահէ Թորոսեանի եւ մարզիկներուն հետ՝ խմբապետ ընկեր Կարօ Մաթոսեան, ճորճ Օսիկեան, ճորճ Սայել, Գեորգ Զամասեան, Կարօ Ապտուլմասիի, Մայք Ապտուլմասիի, Խաժակ Պոսնոյեան, Գարլոս Մաքսիսի, Ֆատի Ֆանօն եւ Անդօ Քոսայեան:

Յաջորդող օրերուն իմացայ, որ Դ.Մ.Մ.-ական ընկեր Կարօ Մաթոսեան 11 կողով հռչակուած է մրցաշարքի լաւագոյն ռմբարկուն եւ մրցանակաբաշխութեան օրը պարգևատրուած է կազմակերպիչներուն կողմէ:

1921 թուականին եւ անոր յաջորդող տարիներուն հայ ազգի պատմութեան ամենէն դժնդակ օրերուն, անձնագոհ ընկերներ ջարդէն մազապործ եղած վերապրողները համախմբեցին, ամո՞նք աչքերը յառած Արարատի կատարին ներշնչեցին հաւատք ու կորով, ոգեւորեցին յուսահատ զանգուածները: Այնքապի «Արարատ» խումբի հիմնադիր երիտասարդութիւնը՝ Վահրիճ Կեօքեան, Յարութիւն Մոմճեան, Յովհաննէս Գասարճեան, Կարապետ Գասարճեան, Յարութիւն Մոմճեան, Յակոբ Կրպոյեան, Երուանդ Գուզուգեան, Գեորգ Նազարեան, բերդապահ Յովսէփ Սրապոնեան, Գրիգոր Տէյիւնճեան եւ ուրիշներ կեանքի կոչեցին իրենց մարզական միութիւնը՝ վերանուանելով Դ.Մ.Մ. «Արարատ», իսկ կարճ ժամանակ մը ետք՝ Դայ Մարմամարգական Միութիւն:

Հիմնադիր սերունդին յաջորդեցին նորերը՝ Գեորգ Ֆրստգճեան (Եօրկի), Բարսեղ Յարութիւնեան, Կարապետ Աբիլեան, Վարդան Վարդանեան, Վահան Տարվիշեան, Կարապետ Արսլանեան, Ալետիս Վարդանեան, Գրիգոր Վարդանեան:

«Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» նշանաբանը շարունակուեցաւ թեւածել միջին սերունդի ֆութպոլիստներուն հետ՝ Փանոս Սինանեան, Անթուան Պերեճիզեան, Յովհաննէս Պեարեան, Յակոբ Գրզըլկեօզեան (Զօմալիքօ), Դապիպ Քէլէ Նահապ, Գեորգ Պօղարեան, Թորոս Արապեան, Մուրատ Թորոսեան, ճիմի, Ալպեր Պեարեան, Անդրանիկ Պօպելեան, Նազար Տեր Պօղոսեան, Ռիմոն Պիսիլիս, բերդապահ Գրիգոր Պարոնեան, Վարդան Պաքարեան, Սարգիս Շեօմէլեան, Յովսէփ Վասոյեան, Յակոբ Յակոբեան, Դապիպ Մխսեան, Գառնիկ Նաճարեան, Լեւոն Արապեան, Խաչիկ Պօպելեան, Նազար Տեր Պօղոսեան եւ շա՛տ ուրիշներ:

Այսօր եւս ղեկավարներուն եւ երիտասարդութեան մօտ նկատելի է շարքն ու համակիրները, յուսահատ զանգուածները (թէւ նոսրացած) համախմբելու, ամո՞նք հաւատքով ներշնչելու ոգեւորելու, օժանդակելու կորովը:

Ահա թէ ինչպէս կը մտածէի, այդ օր, Ազիզիէի «Ժալա» դաշտին վրայ, մրցումէն ետք:

Դալէպի տխրունիական եւ Դ.Մ.Մ.-ական տղոց մէջ տիրող եռանդը ինձի համար յաղթանակ էր՝ առանց «փենալթիներու» օգնութեան:

Վարձերներդ կատար:

ՆՈՒՐԱՏՈՒՌԻԹԻՒՆ

Խմբագրատուն այցելութեան առիթով, զննատելով թերթի աշխատակազմին աշխատանքները, ընկեր Ստեփան Նաճարեան սրտաբուխ նուիրատուութիւն մը կը կատարէ «Արարատ»ին:

ՃԳՆԱԺԱՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՈՐԱԳԻՐ. ՄԻՔԱՅԷԼ ԱՐՔ. ԱՋԱՊԱՀԵԱՆ

Շարունակում էք 1-ին

Եւ արտայայտութիւններու կասեցումն է՝: Ան պահանջեց յարգել սրբավայրերը եւ ահազանգեց, որ ներքին եւ արտաքին ներկայ կացութիւնը ահաւոր վտանգներու առջեւ կրնայ դնել Դայաստանը, զայն առաջնորդելով անդառնալի իրավիճակներու: «Անհրաժեշտ է մեր գերագոյն ճիգը թափենք՝ առաջը առնելու մօտ վտանգաւոր պայմաններու: Եկեղեցին կոչուած է իրեն առնչուող հարցերը քննելու եւ համապատասխան լուծումներ որոնելու, այնպէս ինչպէս պետութիւնը՝ գերծ մնալով յաւելեալ բարդութիւններ եւ բեւեռացումներ ստեղծող քայլերէն», ըսաւ Վեհափառ Դայրապետը: Ան շեշտեց պետութեան օրէնքներն ու եկեղեցւոյ հեղինակութիւնը յարգելու կարեւորութիւնը, կոչ ուղղելով հարցերը քննելու ներքին ճամբով եւ հեռանալու մեր հոգեւոր, ազգային ու բարոյական արժէքներուն անյարի լեզուի եւ ոճի գործածութենէն: Դատապարտելով ապահովական ուժերուն Մայր Աթոռ Մուտքը, Արամ Ա. կոչ ուղղեց դադրեցնելու ծերբակալութիւններու արշաւը եւ հանդարտութեամբ մօտենալու հակաօրինական նկատուող կացութիւններուն ու պարագաներուն: «Ներկայ բարդ կացութենէն դուրս գալու համար, Վեհափառ Դայրապետը պիտի շարունակէ հաղորդակցիլ հայկական կուսակցութիւններու, կազմակերպութիւններու եւ բնականաբար նաեւ Դայաստանի իշխանութեան հետ, որպէսզի փոխադարձ հասկացողութեամբ գտնուի հարցերու լուծման միջոց», նշուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի հրապարակած հաղորդագրութեան մէջ:

ՀԱՅ-ԹՐԵԱԿԱՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Դայաստանի տարածքային կառավարումի եւ ենթակառոցներու նախարար Դաւիթ Խուտաթեան Իսթանպուլի մէջ տեսակցեցաւ Թուրքիոյ ուժանիւթի եւ բնական պաշարներու նախարար Ալիարսլան Պայրաքթարի հետ: Ժողովականները քննարկեցին երկու երկիրներուն միջեւ ուժանիւթային ոլորտին մէջ համագործակցութեան հնարաւորութիւնները:

Կարեւորագոյն Նորութիւն 2025-2026 տարեշրջանէն սկսեալ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԿԸ ՍԿՍԻ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՊԱՔԱԼՈՐԵԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ

COLLÈGE MESROBIAN

A PARTIR DE LA RENTRÉE PROCHAINE 2025-2026,

le Collège Mesrobian est fier d'annoncer le lancement du Baccalauréat Français !

Une nouvelle étape pour offrir à nos élèves un enseignement d'excellence, reconnu à l'international.

PLACES LIMITÉES :

Les inscriptions pour la classe de Seconde sont désormais ouvertes, nous vous invitons à vous inscrire dans les meilleurs délais.

COLLÈGE MESROBIAN DES ARMÉNIENS CATHOLIQUES

Koujl Hamoud - Rue Aras - Liban

Tel : 762504 / 262953 / 264940

✉ admission@mesrobian.com

www.mesrobian.com

Դայ կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարանը հպարտութեամբ կը յայտարարէ Ֆրանսական պետական պաքալորեայի (Baccalauréat Français) ծրագիրին մեկնարկը՝ 2025-2026 տարեշրջանէն սկսեալ:

Սա պատմական նուաճում մըն է վարժարանի պատմութեան մէջ եւ կը հանդիսանայ մոր չը մը՝ ակադեմական գերազանցութեան եւ միջազգային հնարաւորութիւններու ապահովման ճանապարհին վրայ:

Նախաձեռնութիւնը կ'արտայայտէ Մեսրոպեանի կրթական պարտաւորութիւնը եւ յանձնառու մօտեցումը՝ մատուցելու բարձրագոյն մակարդակի կրթութիւն Լիբանանի հայ համայնքի զաւակներուն:

Ֆրանսական պաքալորեան աշակերտութեան դիմաց կը բաճայ կրթական մոր եւ լայն դռներ, կը զարգացնէ վերլուծական մտածողութիւնը, յառաջ կը մղէ լեզուական հմտութիւնը եւ կը պատրաստէ աշակերտը՝ Եւրոպայի եւ աշխարհի յառաջատար համալսարաններու մուտքին:

Ծրագիրը պիտի սկսի գործադրուիլ յառաջիկայ տարեշրջանի 10-րդ դասարանէն՝ Seconde-էն սկսեալ: Արձանագրութիւնները սկսած են, կան սահմանափակ թիւով տեղեր:

Մանրամասնութիւններուն համար դիմել Մեսրոպեան վարժարանի քարտուղարութիւն, հեռաձայն՝ 01 260504, 262955, 254940, WhatsApp 03703991, ժամը 8:00-12:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Տեղեկատուական Գրասենեակ

Դայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարանի

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: araradart@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية تصدر عن شركة ماسيس للثقافة والشر (ش.م.م.)

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՕՐ

28 Յունիս 2025: Տարուան 179-րդ օրն է: 2025-ի աւարտին կը մնայ 186 օր:

Դէպքեր-տօներ
1098 – Առաջին խաչակրաց արշաւանքներու ընթացքին, **խաչակիրները** Անտիոք քաղաքի մօտ կայացուցին վճռական յաղթանակ մահմետական ուժերուն դէմ: Ասիկա հզօր ռազմական բարոյական զարկ տուաւ խաչակիրներուն եւ ճամբայ բացաւ Սուրիոյ ու Պաղեստինի մէջ մոր յառաջխաղացումներու:
1292 – Եգիպտոսի սուլթան **Մելիք Աշրաֆը** գրաւեց **Հռոմկլա** քաղաքը՝ Կիլիկիոյ կաթողիկոսանիստը: Կաթողիկոս **Ստեփանոս Դ. Հռոմկլայեցի**ն գերի տարուեցաւ, իսկ քաղաքը ենթարկուեցաւ աներունի:
1877 – Ռուս-թրքական պատերազմի ժամանակ, գնդապետ **Արշակ Տեր-Ղուկասովի** հրամանատարութեամբ հայկական կամաւորական ջոկատները ազատագրեցին Պայագիտը:
1914 – Սարայելոյի մէջ, **Կարիլօ Փրինցիպ** անունով սերպ ուսանող մը սպաննեց Աւստրո-հունգարական գահաժառանգ **Ֆրանսուա Ֆերտինանտը** եւ անոր կինը՝ **Սոֆիան**: Այս դէպքը կայծ տուաւ Առաջին Զամաշխարհային պատերազմին:
1919 – Վերսայ պալատին մէջ ստորագրուեցաւ **Վերսայի պայմանագիրը**՝ պաշտօնապէս վաւերացնելով Առաջին Զամաշխարհային պատերազմի աւարտը:
1992 – **Սոմթէ Մելքոնեանի** հրամանատարութեամբ Արցախի մէջ հայկական ուժերը ազատագրեցին **ճարտար, Մաճկալաշէն եւ Կարմիր Շուկայ** գիւղերը:

Ծնունդներ

1712 – **Ժան-ժազ Ռուսօ** – Լուսաւորութեան դարաշրջանի ազդեցիկ փիլիսոփայ, գրող ու մանկավարժ: Իր գործերուն մէջ քննադատեց աւատապետական անհաւասարութիւն ու կեղծ քաղաքակրթութիւնը:

1901 – **Ալեք Թազաւորի Մանուկեան** – Զմիւռնիա ծնած հայ մեծահարուստ բարերար, ծարտարագէտ եւ արդիւնաբերող: Երկարամեայ նախագահի եղած է **Դայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան** (ՀԲԸՄ)-ի (1953–1989), որուն օրով Միութիւնը ծաղկեցաւ եւ ընդլայնեցաւ: Ի երախտագիտութիւն իր ներդրումներուն, 1994-ին արժանացաւ Դայաստանի Ազգային Զերոսի բարձրագոյն կոչման:

1924 – **Յամիկ Ժամկոչեան** – Թիֆլիսի հայ թատրոնի անբաժան դէմք:

1947 – **Եուրի Բախշեան** – Զասարական ու քաղաքական գործիչ: Եղած է ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ: 1999-ի Հոկտեմբերի 27-ի ահաբէկութեան ժամանակ զոհուեցաւ խորհրդարանին մէջ:

1893 – **Սրբուհի Լիսիցեան** – Դայ պարագիտութեան հիմնադիր, շարժումներու գրառման գիտական համակարգի հեղինակ:




Մահեր

1987 – **Արուս Ասրեան (1904–1987)** – Դայ բեմի նշանաւոր դերասանուհի: Եղած է բեմադրիչ Վարդան Աճեմեանի կինը:

2004 - **Գեորգի Սինասեան (1942–2004)** – Դայ էսթրատային երգիչ եւ զուարթ ու բոցավառ իւրայայտուկ ծայրով թեմոր:

1936 - **Սիխայիլ Տալ (1936–1992)** – Խորհրդային ճատրակի առաջալէ՛ աշխարհի ութերորդ ախոյեան (1960–61): Յայտնի էր յարձակողական եւ սրամիտ ոճով՝ ուներ գրեթէ կախարդական կարողութիւն կանխելու մրցակցին քայլերը:

2011 – **Փօլ Պաղտապեան (1953–2011)** – Սփիւռքի սիրուած երգիչ եւ երգահան: Ծնունդով Դալէպցի, սակայն երգած է սփիւռքի բոլոր անկիւններուն մէջ: Իր ստեղծագործութիւնները կ'անդրադառնան կարօտին, սիրոյն եւ հայրենիքին նուիրուած խոհերու:



ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՕՐ

Պէյրուք (արեւոտ)
Ցերեկը 29/26՝ գիշերը՝ 63% տամուկ

Երեւան (արեւոտ)
Ցերեկը 32/18՝ գիշերը՝ 22% տամուկ

Դալէպ (արեւոտ)
Ցերեկը 40/24՝ գիշերը՝ 22% տամուկ

Դամասկոս (արեւոտ)
Ցերեկը 38/21՝ գիշերը՝ 11% տամուկ

Տուպայ (ընդհ. ամպոտ)
Ցերեկը 39/32՝ գիշերը՝ 50% տամուկ

Լոս Անճելըս (արեւոտ)
Ցերեկը 29/17՝ գիշերը՝ 44% տամուկ

Սիտնի – վաղը (մասամբ ամպամած)
Ցերեկը 18/10՝ գիշերը՝ 65% տամուկ

Մոնթրէլիտօ – վաղը (մասամբ ամպամած)
Ցերեկը 12/8՝ գիշերը՝ 77% տամուկ